

երբ բոլորովին լցուի արտաքին աշխարհով
և յօժարութեամբք։ Այդ ձր աշխարհի դաս-
տիարակութեան օրինաց համաձայն է։ «Ձէ՛,
հիմա ալ անցած է այն ժամանակը» երբ
այդ համոզման հետևողը կը կարծէին՝ թէ
տեղեակ են դաստիարակութեան, և կարող
դաստիարակելու Ռադիզզայնի և ուրիշ նման
դաստիարակաց ուղղութիւնը։

Այս մի բանի տողերը պարտք համարե-
ցանք գրել՝ ոչ ի ջատագովութիւն մեր «Նուէր
Մանկանց»ին՝ որ արդէն մերը չէ, և որուն

պարզ թարգմանիչն ենք, և որուն կարօտ
ալ չէ, այլ կերպով մը ծանօթացնելու հա-
մար անոնց անմահ Հեղինակին յարգն ու
համբաւը՝ Մասխի մէջ մեր դէմ դրուած
հատուածը կարգացողներուն։

Ահաւասիկ կը գնենք հոս նոյն անմահ-
անուն Հեղինակին նոյն գրքէն վերը յի-
շուած բերթուածը՝ ուր կը նկարագրէ ըզ-
մանուկ, ճաշակ մը տալու համար փափա-
քողաց Ռադիզզայնի հանճարոյն և մեր թարգ-
մանութեան։

Մ Ա Ն Ո Ւ Կ

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԱՌ ՄԱՅՐԵՐ

ՄԱՐԴԸ չէ՛, ոչ, մանուկն է արարչութեան թագաւոր,
Որ կը ժրպտի առիւծին մէջ ճանկերուն ահաւոր,
Եւ դազանն այն յաղթըւած դընէ վայն իւր մօրկան ծոց-
Մընչէ՛, ձայնիւն քաղցրութիւն գերազանցէ զչոմբորոս։
Կ'իջնէ իբրեւ Հերակլէս սրբօրոցէն յաղթական,
Մարդը տեղի տայ կընով, կինը տեղի տայ մանկան։

Անմեղ, քաղել չի դիտեր, ըզմեղ առ ինք կը ձըգէ,
Կը կապեն զինք որ չիխայ, նա մեղ շըղթայ կը դարձնէ,
Թաթիկներով իւր երկու՝ պընդէ վըզին մեր անսւր,
Աշխարհ ամէն հնազանդի, ոճրադործներն իսկ անլուր,
Ով որ կըռուիւ հետն ուզէ, ինչ ահաւոր ուր զէնքեր,
Տըղայական կայծակներ, արտասուսխառըն ճիւղը։
Այոպէս ամէն բան հըլու է նորածին արքային,
Որ աշխարհի օրէնքներ կու տայ խորքէն որոցին։

Ո՛վ մայրեր, ձեր գըրկաց մէջ փըթթին ծաղկին սիրաբոյր
Դեռափըթթի նոր մայրեր և շուշաններ ձիւնաթոյր,
Մաղկունք սիրոյ, լուսաշուր մանկունք, վարսիւք ոսկեթիւղ,
Ձորու կ'որոնեք և ծընկաց վըրայ կու տանք ոստոսեղ։
Ձըւարթ իբրեւ առաւօտ՝ անմեղութեան նըմանի,
Հանց վարդագեղ իբրեւ յոյս և որ ինչ նոր կը սկըսի,
Մանուկն արեւ է պայծառ որ կը ժրպտի ի մէջ տան,
Գարունն է նա Աստուծոյ վերջին աւուրց մէջ աշնան,
Մառք անտրեւ անպըտակ, երբ կը մեռնի մանկութիւն,
Երբոր ըզմեղ լըքանէ բերած գանձուցն հետ դարուն,
Մեր ճերմըկցած բազկաց վրայ՝ որ օդոյ մէջ կը գողան
Բուսաւ կոկոն մը՝ ժըպտի որպէս գի մէջ խիտ ձըմրան։

Ա'երևի նա, իւր տեղի զուարթացընէ երեսներ,
ժըպտի մանուկն, իւր ժըպտ ցըրուէ վանէ սե ամպեր,
Խօսի նա, ո՛վ թըլըսըմ իւր պարզամիտ խօսքերուն,
Փալէ, և մեր վիշտք մեռնին ներքե իւր մերկ ստքերուն,
Աը կանչեն զինք, կը վազէ մեծ աշխուժով եռանդուն,
Ցատքըռաելով հեռաւով թեւակըտուր զերդ թըռչունն,
Կը յառաջէ սարսափած գետնէն, շուարած ու տարտամ,
Ձախ ծուռումսուս զըրախտէն ինկած Սիրոյ մը նըման:

Շուրթն է մաքուր և սըրտին վըրայ չունի բիծ բընաւ,
Կոյս կաթին պէս սուկից զինքը կը կըտրեն զըժուարաւ,
Ձէ տակաւին ոչ բրած և ոչ զըրժած իւր երգման,
Բնաւ չի կարմիր, զի բընաւ սուտ մի չըսէ իւր բերան,
Բայց մարդ կարմրի տոնպ ահոր զիմաց, զըժնէ՛ դատաւոր,
Խիստ ահաւոր է նա, բընաւ ոչ մի խորհուրդ յանցաւոր,
Երբ հրեշտակիլը վազէ՛ ճակատ զըւարթ ու սիրուն,
Ձիշխէ զէմ՝ դնել երկընքին՝ որ փայլի մէջ աչերուն:
Անսուրբ խորհուրդն իրեն մօտ՝ է սըրբապիղծ զարշութիւն:
Ո՛վ զքեզ պըղծէ ճակատ ջինջ, սըրտիկ ճերմակ ձիւնապոյն:
Ո՛հ, երանք՝ քեզ մանկիկ ամբիծ, յաղթող, երանք,
Երանք՝ ևս չափահաս մարդուն որ քեզ նըմանի:

Բայց որպէս զի նըմանք ահոր, մայրեր, զըրէք ուշ,
Ձեր պարտքն է՝ երբ կըրթէք ձեր ծոցոյն պըտուղը ահուշ,
Եւ որպէս զի մեծնալով՝ մեծնայ սըրտիկն ալ իրեն
Լըցէք ահոր մէջ բարի հիւթ մը մատաղ հասակէն:
Ո՛րչափ ահոյշ ալ ըլլայ, կարելի է թէ մոռնայ,
Բայց իւր բաւոր կենաց մէջ պիտի ահոր համն ըզգայ,
Ահոր հոտով տի բուրեն իւր յիշատակքն ամենայն,
Իւր շըրթանց վըրայ զըրոշմուած համբոյրներուն ձեր նըման:

Հ. ԱՐՄԵՆ ՂԱՅԻԿԵԱՆ

